

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2004թ. հունվար-ապրիլին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7600 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 52.2 մլրդ.դրամ,որը 2003թ. մակարդակը գերազանցել է 6.8%-ով: 2004թ. ապրիլի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է մարտ ամսվա 108.1%-ը:

Հանրապետությունում շարունակվում է զարմանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները:

2004թ. մայիսի 1-ի դրությամբ հանրապետությունում կատարվել է 36866 հեկտար զարմանացան մշակաբույսերի ցանք, որը 2003թ. մակարդակը գերազանցում է 15322 հեկտարով, կամ 71.1%-ով:

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի զարմանացանի ընթացքը հանրապետությունում 2004թ. մայիսի 1-ի դրությամբ

(հեկտար)

Մշակաբույսերի անվանումը	Ցանվել է		2004թ. 2003թ. նկատմամբ %
	2004թ.	2003թ.	
Հացահատիկային և հատիկա-ընդեղենային մշակաբույսեր	27408	15023	182.4
Կարտոֆիլ	5667	3233	175.3
Բանջարանոցային մշակաբույսեր	2436	2327	104.7
Բոստանային մշակաբույսեր	344	291	118.2
Կերային մշակաբույսեր	909	616	147.6
Այլ մշակաբույսեր	102	54	188.9
ԸՆդամենը	36866	21544	171.1

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2004թ. մայիսի 1-ի դրությամբ

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %
ք.երևան	0.1	100.0	0.8	100.0	15.2	100.7
Արագածոտն	2.7	112.5	14.1	105.2	7.7	110.0
Արարատ	2.2	115.8	9.2	105.7	11.2	116.7
Արմավիր	2.9	103.6	8.1	106.6	11.0	110.0
Գեղարքունիք	3.9	114.7	21.9	105.8	10.8	111.3
Լոռի	2.4	109.1	14.6	105.8	9.6	147.7
Կոտայք	2.7	128.5	12.4	105.1	76.3	113.4
Շիրակ	3.4	109.7	18.4	105.7	10.1	111.0
Սյունիք	2.1	123.5	10.4	105.1	3.9	93.8
Վայոց ձոր	0.9	112.5	4.8	106.7	4.2	123.5
Տավուշ	1.9	111.8	8.6	106.2	5.4	112.5
ԸՆդամենը ՀՀ	25.2	113.5	123.3	105.7	165.4	112.7

2004թ. հունվար-ապրիլին անասնի և թռչնի իրացումը գերազանցել է 2003թ. ցուցանիշը 3 հազ. տոննայով կամ 13.5%-ով, կաթի արտադրությունը՝ 6.6 հազ. տոննայով կամ 5.7%-ով, ձվինը՝ 18.7 մլն. հատով կամ 12.7%-ով:

¹ Ներառյալ ներքին սպառումը: